ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս գրքույկի տեղեկատվությունը նախատեսված է վերարտադրողական տարիքի այն կանանց համար, որոնց նշանակում են վալպրոատներ: Ծանոթացեք այս գրքույկի, ինչպես նաև դեղորայքի բժշկական կիրառման հրահանգների հետ՝ տեղադրված դեղորայքի տուփի մեջ և դիմեք ձեր բժշկին՝ ցանկացած հարց առաջանալու դեպքում:

Սույն տեղեկատվական գրքույկի մեջ շատ տեղեկատվություն կա, խորհուրդ է տրվում այս գրքույկը ցույց տալ ընկերներին և Ձեր ընտանիքի անդամներին՝Ձեր բուժումը քննարկելու և հասկանալու համար:

Մի նետեք այս տեղեկատվական գրքույկը: Միգուցե հարկ լինի դրա հետ կրկնակի անգամ ծանոթանալ:

ՌԻՍԿԵՐՆ ԱՊԱԳԱ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ

Եթե կինը վալպրոատներ է ընդունում հղիության ընթացքում, ապա դա կարող է բացասաբար անդրադառնալ նրա ապագա երեխաների վրա:

Հղիության ընթացքում ինչպես առանձին վալպրոատների կիրառումը, այնպես է վերջինիս կիրառումն էպիլեպսիան բուժող այլ դեղորայքի հետ համադրությամբ, առավել վտանգավոր է՝ քան այլ հակացնցումային դեղամիջոցների կիրառումը: Որքան բարձր է դեղաչափը, այնքան ավելի բարձր է ռիսկը, բայց այնուամենայնիվ ռիսկն առկա է ցանկացած դեղաչափի դեպքում:

Վալպրոատները կարող են լուրջ բնածին արատների պատճառ դառնալ և ազդել երեխայի զարգացման վրա: Բնածին արատները ներառում են ողնաշարի զարգացման արատները (Spina Bifida), դեմքի և գանգի այլանդակությունը, սրտի, երիկամների, միզուղիների և սեռական օրգանների արատները, վերջույթների թերությունները:

Եթե դուք վալպրոատներ եք ընդունում հղիության ընթացքում, դուք ավելի մեծ ռիսկի եք ենթարկվում ծննդաբերել բնածին արատներով երեխա, քան մյուս կանայք, ովքեր պահանջում են բժշկական միջամտություն: Քանի որ վալպրոատները կիրառվում են տարիներ շարունակ, ապա մենք պարզել ենք, որ վալպրոատներ ընդունած կանանց շրջանում բնածին արատներ դիտարկվում են 100-ից 10 երեխայի մոտ: Համեմատության համար նշենք, որ էպիլեպսիայով չտառապող կանանց շրջանում բնածին արատներ նկատվում են ծնված 100 երեխայից 2-3-ի մոտ:

Ընդունված է, որ նախադպրոցական տարիքի մինչև 30-40% երեխաների մոտ, որոնց մայրերը հղիության ընթացքում վալպրոատներ են ընդունել, կարող են զարգացման խախտումներ նկատվել վաղ մանկությունում: Ներարգանդային փուլում վալպրոատների ազդեցությանը ենթարկված երեխաներն ավելի ուշ են սկսում քայլել և խոսել, մտավոր զարգացվածությունն ավելի ցածր է, քան մյուս երեխաների մոտ, և կարող են ունենալ խոսքի ու հիշողության խախտումներ:

Աուտիկ սպեկտրի խախտումներն ու մանկական աուտիզմը առավել հաճախ ախտորոշվում են այն երեխաների մոտ, ովքեր վալպրոատների ազդեցությանն են ենթարկվել ներարգանդային փուլում, իսկ որոշ տվյալներ վկայում են, որ այդ երեխաների մոտ ավելի բարձր է ուշադրության պակասի կամ գերակտիվության համախտանիշի զարգացման ռիսկը (ՈՒՊԳԱՀ).

Ձեր բժշկի հետ քննարկեք ֆոլաթթվի կիրառման հնարավորությունը հղիության ընթացքում:Ֆոլաթթուն նվազեցնում է Spina Bifida-ի զարգացման և վաղ վիժման հավանականությունը, որոնց զարգացման ռիսկն առկա է ցանկացած հղիության դեպքում: Բայցևայնպես, քիչ հավանական է, որ ֆոլաթթվի կիրառումը թույլ կտա բացառել վալպրոատների կիրառմամբ պայմանավորված բնածին արատների ռիսկը:

Եթե դուք վերարտադրողական տարիքի կին եք, ապա Ձերբ բժիշկը Ձեզ վալպրոատներ պետք է նշանակի միայն այն դեպքում, երբ այլ բուժում Ձեզ չի օգնում:

Այս դեղը նշանակելուց բժիշկը Ձեզ պետք է բացատրի, թե ինչ կարող է պատահել Ձեր երեխայի հետ, եթե Դուք կհղիանաք վալպրոատներ ընդունելու ժամանակ: Ավելի ուշ, եթե Դուք ցանկություն կունենաք երեխա ունենալ, Դուք չպետք է ընդհատեք դեղի ընդունումը մինչև բժշկի հետ հանդիպումը և Ձեր բուժման պլանի փոփոխումը, եթե իհարկե դա հնարավոր է:

ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Եթե վալպրոատներ Ձեզ առաջին անգամ են նշանակվում, ապա Ձեր բժիշկը կբացատրի ապագա երեխայի համար ռիսկերը՝ հղիանալու դեպքում: Եթե Դուք վերարտադրողական տարիքում եք, ապա պետք է ամբողջ բուժման ընթացքում օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչներ: Դիմեք Ձեր բժշկին կամ այցելեք ընտանիքի պլանավորման գրասենյակ, եթե հակաբեղմնավորիչ միջոցի վերաբերյալ խորհրդատվության կարիք ունեք:

Հիմնական կետերը.

- **Համոզվեք, որ դուք օգտագործում եք արդյունավետ հակաբողմնավորիչ միջոց:**
- **Անմիջապես հայտնեք Ձեր բժշկին հղիության առկայության կամ կասկածի մասին:**

ԲՈՒԺՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ

Եթե Դուք ստանում եք բուժում վալպրոատներով և չեք պլանավորում երեխա ունենալ, ապա համոզվեք, որ Դուք օգտագործում եք արդյունավետ հակաբեղմնավորիչ մեթոդ: Դիմեք Ձեր բժշկին կամ այցելեք ընտանիքի պլանավորման գրասենյակ, եթե հակաբեղմնավորիչ միջոցի վերաբերյալ խորհրդատվության կարիք ունեք:

Հիմնական կետերը.

- **Համոզվեք, որ դուք օգտագործում եք արդյունավետ հակաբողմնավորիչ միջոց:**
- **Անմիջապես հայտնեք ձեր բժշկին հղիության առկայության կամ կասկածի մասին:**

ԲՈՒԺՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Եթե Դուք ստանում եք բուժում վալպրոատներով և պլանավորում եք երեխա ունենալ, ապա Դուք պետք է շարունակեք ընդունել վալպրոատներ և օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչ մեթոդ՝ մինչ Ձեր բժշկի հետ հանդիպումը: Դուք պետք է դիմեք Ձեր բժշկին մինչ հղիանալը, քանի որ Դուք կարող եք համապատասխան միջոցառումներ ձեռնարկել հղիության առավել արդյունավետ ընթացքի, ինչպես նաև Ձեր և Ձեր երեխայի համար առկա ռիսկերի մաքսիմալ նվազեցման համար:

Ձեր բժիշկը կարող է փոխել վալպրոատների դեղաչափը կամ նշանակել այլ դեղ՝ մինչ հղիանալը: Հղիանալու դեպքում Ձեզ պետք է հատուկ ուշադրություն հատկացվի՝ ինչպես Ձեր հիվանդության վերահսկման, այնպես էլ Ձեր ապագա երեխայի զարգացման համար:

Ձեր բժշկի հետ քննարկեք ֆոլաթթվի կիրառման հնարավորությունը հղիության ընթացքում: Փոլաթթուն նվազեցնում է Spina Bifida-ի զարգացման և վաղ վիժման հավանականությունը, որոնց զարգացման ռիսկն առկա է ցանկացած հղիության դեպքում: Բայցևայնպես, քիչ հավանական է, որ ֆոլաթթվի կիրառումը թույլ կտա բացառել վալպրոատների կիրառմամբ պայմանավորված բնածին արատների ռիսկը:

Հիմնական կետերը.

- **Մի դադարեք ընդունել ձեր հակաբեղմնավորիչ մեթոդը՝ մինչ ձեր բժշկի հետ հանդիպումն ու բուժման պլանի փոփոխումը, որը կապահովի Ձեր էպիլեպսիայի/**

երկբևեռ խանգարման անհրաժեշտ վերահսկողությունն ու մինիմալ ռիսկը Ձեր երեխայի համար:

- **Անմիջապես հայտնեք Ձեր բժշկին Ձեր հղիության առկայության կամ կասկածի վերաբերյալ:**

ՉՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հղիության ընթացքում վալպրոատներ ընդունած մայրերի երեխաները գտնվում եմ զարգացման բնածին արատների և վաղ զարգացման խախտումների բարձր ռիսկի վտանգի ներքո՝ այդ թվում և ծանր: Եթե դուք ընդունում եք վալպրոատներ և կարծում եք, որ հղի եք կամ կասկածում եք, որ հղի եք, ապա անմիջապես դիմեք ձեր բժշկին: Մի ընդհատեք էպիլեպսիայի/ երկբևեռ խանգարման Ձեր դեղի ընդունումն առանց բժշկի խորհրդի:

Ձեր բժշկի հետ քննարկեք ֆոլաթթվի կիրառման հնարավորությունը հղիության ընթացքում: Ֆոլաթթուն նվազեցնում է Spina Bifida-ի զարգացման և վաղ վիժման հավանականությունը, որոնց զարգացման ռիսկն առկա է ցանկացած հղիության դեպքում: Բայցևայնպես, քիչ հավանական է, որ ֆոլաթթվի կիրառումը թույլ կտա բացառել վալպրոատների կիրառմամբ պայմանավորված բնածին արատների ռիսկը:

Հիմնական կետերը.

- **Անմիջապես հայտնեք ձեր բժշկին հղիության առկայության կամ կասկածի մասին:**
- **Մի դադարեք ընդունել վալպրոատներ՝ առանց բժշկի խորհրդի:**